

## ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

*որպէս Իյորն իր ծննդյան փունն է նշում  
և երկու նվեր ստանում*

**Ի**ՅՈՐԸ՝ գորշ ծեր իշուկը, կանգնել էր գետակի ափին ու ջրերի մեջ ինքն իրեն էր նայում:

— Խղճալի տեսարան է,— ասաց նա,— իսկապէս ցավալի է:

Նա շրջվեց ու գետափով մի քսան յարդ<sup>1</sup> ծույլ-ծույլ ներքև իջավ, լողալով անցավ մյուս ափն ու նորից ջրի մեջ իրեն նայեց:

— Այդպէս էլ գիտեի,— ասաց նա,— այս ափից էլ նույն բանն է: Բայց թե ո՞ւմ է հետաքրքիր: Ո՞ւմ է պետք: Իսկական ողբերգություն է, այ թե ինչ:

Զարխտի թփերի կողմից աղմուկ լսվեց, և հայտնվեց Փուն:

— Բարի լոյս, Իյոր,— ասաց Փուն:

— Բարի լոյս, Փո՛ւ արջուկ,— տխուր ասաց Իշուկը,— եթե կարծում ես, որ բարի է, անձամբ ես այնքան էլ վատահ չեմ:

— Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել:

— Հէ՛չ,— Արջո՛ւկ, հէ՛չ: Ոչ բոլորս ենք կարող, ոմանց էլ բախտ չի վիճակված: Ի՞նչ արած:

— Ի՞նչը բոլորս չենք կարող,— ասաց Փուն՝ քիթը տրորելով:

---

<sup>1</sup> 1 յարդը մոտ 91 սմ է:



— Ուրախանալ, երգել-պարել, եկէք պար գանք թթենու շուրջը<sup>1</sup>:

— Օ՛հ,— ասաց Փուն ու երկա՛ր ստածելուց հետո հարցրեց,— իսկ ուր է այստեղ թթենի:

— Bon-hommy<sup>2</sup>,— տխուր շարունակեց Իյորը,— Ֆրանսերենն ասում են bon-hommy,— բացատրեց նա,— գիտե՛ս, ես չեմ բողոքում, ի՛նչ կարող ես անել:

---

<sup>1</sup> Անգլիական սանկական խաղերգի վերնագիրն է և առաջին տողը:

<sup>2</sup> Միտումնավոր սխալ ուղղագրությամբ ֆրանսերեն բառ է (պետք է լինի bonhomme), որ նշանակում է բարեսրտություն, բարյացկամություն:



Փուն նստեց մի մեծ քարի վրա ու փորձեց հասկանալ: Իշուկի ասածը կարծես հանելուկ լիներ, ինքն էլ հանելուկներից առանձնապես լավ չէր, քանի որ խելքը կարճ արջուկ էր: Դրա համար էլ որոշեց ընկերոջը սիրտ տալու համար «Կարկանդակի երգը» երգել.

Խորիզ, գաթա, կարկանդակ,  
 Հանելուկ է, թե՛ կատակ.  
 Թներ ունի փայտե ձին,  
 Կրկնե՛ք արագ-արագ՝  
 Խորիզ, գաթա, կարկանդակ:

Սա առաջին տունն էր: Երբ Արջուկը երգեց վերջացրեց, Իյորը չասաց, որ երգն իրեն դուր չի գալիս, ուստի Փուն սիրով անցավ երկրորդ տանը.

Խորիզ, գաթա, կարկանդակ,  
 Հանելուկ է, թե՛ կատակ.  
 Ո՞վ կա կրիայից արագ,  
 Կրկնի՛ր արագ-արագ՝  
 Խորիզ, գաթա, կարկանդակ:


Այս անգամ էլ Իյորը ոչինչ չասաց, այնպես որ Փուն շարունակեց քթի տակ շատ կանաց երրորդ տունը երգել.

Խորիզ, գաթա, կարկանդակ,  
 Հանելուկ է, թե՛ կատակ.  
 Սագն էր գրել ինձ նամակ:  
 Կրկնի՛ր արագ-արագ՝  
 Խորիզ, գաթա, կարկանդակ:



— Կերգես, բա ի՞նչ կանես,— ասաց Իյորը,— երգիր, երգիր, «անթի-թիղի, անթի-թու», պոպոկ-պնդուկ ժողովենք: Հե՛ջ տրանադրությունդ չգցես: Քեզ լավ զգա:

- Իրոք լավ եմ զգում,— ասաց Փուն:
- Քեզ ինչ կա, որ չուրախանաս:
- Ինչո՞ւ, իսկ ինչ է որ: Բան է պատահել: Մի տեսակ տխուր ես երևում, Իյոր:
- Տխու՞ր, ինչո՞ւ պետք է տխուր լինեմ: Այսօր ծննդյանս օրն է՝ տարվա ամենաուրախ օրը:
- Ծննդյանդ օրն է,— Փուն շատ զարնացավ:
- Իհարկե, ինչ է, չե՞ս տեսնում: Նայիր այս բոլոր նվերներին, որ ստացել եմ:
- Իշուկը ոտքով ինչ-որ տեղ ցույց տվեց:
- Նայիր ծննդյանս տորթին: Չե՞ս տեսնում վրայի սոմերնու վարդագույն շաքարաշերտը:
- Փուն նայեց նախ՝ աջ, հետո՝ ձախ:
- Նայեմ նվերներին,— ասաց Փուն,— տորթին: Բայց ո՞ր են:
- Չե՞ս տեսնում:
- Չէ,— ասաց Փուն:
- Ես էլ չեմ տեսնում,— ասաց Իշուկը,— կատակ էր, հա՛, հա՛:
- Փուն գլուխը քորեց՝ այս ամենից մի փոքր շփոթված:
- Բայց իսկապե՞ս այսօր ծնունդդ է:
- Իսկապես:
- Օ՛հ, դե շնորհավոր, Իյոր, ուրախ ծնունդ անցկացնես:
- Դու էլ, Արջո՛ւկ:
- Բայց իմ ծնունդը չէ, Իշո՛ւկ:
- Իմ ծնունդն է, Փո՛ւ:
- Բայց ասում ես՝ դու էլ ուրախ ծնունդ անցկացնես:
- Ինչո՞ւ ոչ: Չես ուզում, չէ՞, որ ամեն անգամ ծնունդիս այսքան տխուր լինես:
- Աս՛, նոր հասկացա,— ասաց Փուն:





— Առանց այն էլ տխուր է,— ասաց Իյորն, ու սիրտը լցվեց,— ես տխուր եմ, հերիք է. ո՛չ նվեր են բերել, ո՛չ անունով տորթ ունեմ, ո՛չ էլ ինչ-որ մեկը հիշել է այդ մասին, ինչ պետք է, որ դու էլ տխրես...

Արջուկն էլ չդիմացավ:

— Տե՛ղ չգնաս, գալիս եմ,— ասաց նա, շրջվեց ու, ինչքան ոտքերում ուժ կար, վազեց տուն: Զգում էր, որ պարտավոր էր իսկույն ինչ-որ նվեր գտնել Իշուկի համար, կարգին նվերի մասին հետո կնտածեր:

Դեռ տուն չէր հասել, հանդիպեց Խոզուկին, որը վեր-վեր էր ցատկում, որ հասներ դռան թակիչին:

— Ողջո՞յն, Խոզո՞ւկ,— ասաց Փուն:

— Բարև, Փո՛ւ,— ասաց Խոզուկը:

— Այդ ինչ էիր անում:

— Փորձում էի թակիչին հասնել,— ասաց Խոզուկը:

— Թող օգնեմ քեզ,— սիրով առաջարկեց Փուն, բռնեց թակիչն ու դուռը ծեծեց:— Հենց նոր Իյորին տեսա՝ անասելի տխուր վիճակում: Ծննդյան օրն է, բայց ոչ ոք չի հիշել. նա էլ շատ տխուր է...

Գիտես Իյորին, էլի... Մեկը չկա՞ այս դուռը բացի, ինչքան ժամանակ է՝ ծեծում ենք:







Փուն նորից թակեց դուռը:

— Փն՛,— ասաց Խոզուկը,— ախր, սա քո տան դուռն է:

— Հա՛, ճիշտ որ,— ասաց նա,— ուրեմն ներս գնանք:

Ներս մտնելուն պես Փուն մոտեցավ պահարանին, որ տեսնի՝ գոնե մի փոքր աման մեղր մնացել է, թե՛ ոչ: Մնացել էր, և Փուն այն դարակից իջեցրեց:

— Սա տանեմ Իյորին,— բացատրեց նա,— որպես նվեր, իսկ դու ինչ ես տանելու:

— Չի՛ կարելի, որ այդ մեղրը ես էլ նվիրեմ,— հարցրեց Խոզուկը:— Երկուսիս կողմից:

— Չէ՛,— ասաց Փուն,— այնքան էլ լավ միտք չէ:

— Ուրեմն փուչիկ կտամ: Տարեդարձիս օրվանից մի հատ մնացել է: Գնամ բերեմ, չէ՛:

— Հրաշալի միտք է, Խոզուկ: Հենց այն է, ինչ Իյորին պետք է: Շատ կուրախանա. փուչիկից ո՞վ կարող է տխրել:

Եվ Խոզուկը վազեց տուն, իսկ Փուն, մեղրը առած, գնաց հակառակ ուղղությամբ:

Տաք, դուրեկան օր էր, և Արջուկը երկար ճանապարհ ուներ գնալու: Դեռ ճանապարհի կեսն էր անցել, երբ ինչ-որ տարօրինակ զգացողություն համակեց նրան. սկսվեց քթի ծայրից, խտրատալով անցավ ամբողջ մարմնով և հասավ մինչև ոտնատակերը: Կարծես ինչ-որ մեկը ներսից ասում էր. «Դե՛, Փն՛, ժամանակն է՝ բերանդ մի կտոր բան զցես»:

— Տե՛ր Աստված,— ասաց Փուն,— չէի կարծում՝ արդեն այսքան ուշ է:

Եվ նա նստեց ու բացեց մեղրի բերանը:





— Լավ է՝ սա հետս վերցրի,— մտածեց նա:— Ամեն արջ չէ, որ այսպիսի օրով տնից դուրս գալուց առաջ գլխի է ընկնում հետն ուտելու բան վերցնել:

Եվ սկսեց ուտել:

«Իսկ հիմա,— մտածեց նա՝ ամանից մեղրի մնացորդը լիզելով,— տեսնենք՝ ուր էինք գնում: Հա՛, Իյորի մոտ»:

Արջուկը դանդաղ տեղից ելավ և հանկարծ հասկացավ, որ ինքը Իշուկի ծննդյան նվերն էր կերել:

— Ա՛յ քեզ բան,— ասաց նա,— հիմա ինչ եմ անելու: Պետք է նրան մի բան տամ:

Միառժամանակ չէր պատկերացնում՝ ինչ կարելի էր անել: Հետո մտածեց. «Ահա մի շատ լավ կճուճ: Հետո ինչ, որ մեջն արդեն մեղր չկա: Եթե մաքուր լվանամ, մեկին էլ խնդրեմ՝ վրան *Շնորհավոր ծնունդդ* գրի, Իյորը կարող է մեջն իր իրերը պահել: Ծատ օգտակար բան կլինի»: Երբ անցնում էր Հարյուր ակրանց անտառի կողքով, մտավ անտառ ու ձայն տվեց Բվին:

— Բարի լոյս, Բո՛ւ,— ասաց նա:

— Բարի լոյս, Արջո՛ւկ,— ասաց Բուն:

— Իյորի ծնունդը շնորհավոր,— ասաց Փուն:

— Հա՛, իսկապես նրա ծնունդն է:

— Ինչ ես նրան նվիրելու, Բո՛ւ:

— Իսկ դու ինչ ես նվիրելու:

— Ես նրան օգտակար կճուճ եմ նվիրելու, որ մեջը բան պահի:

Մտածեցի՝ քեզ էլ խնդրեմ...



— Իսկապէս,— ասաց Բուն՝ կճուճը Փոռի ձեռքից վերցնելով:

— Հա՛, ասացի գամ, քեզ խնդրեմ, որ...

— Սրա մեջ առաջ մեղր են պահել,— ասաց Բուն:

— Դրա մեջ ինչ ուզես, կարող ես պահել,— լուրջ-լուրջ ասաց Փուն,— շատ պետքական բան է: Ուզում էի քեզ խնդրել...

— Վրան պետք է գրել՝ *Շնորհաւոր ծնունդ*:

— Հենց դա էլ ուզում էի խնդրել քեզ,— ասաց Փուն:— Գիտես, էլի՛, ուղղագրությունս այնքան էլ լավ չէ: Այսինքն՝ լավ ուղղագրություն է, բայց մի քիչ կաղում է: Տառերս լավ չեն քայլում. իրար շալակ են բարձրանում: Կգրե՞ս՝ *Ծնունդ շնորհաւոր*:

— Ինչ լավ կճուճ է,— ասաց Բուն՝ անանը բոլոր կողմերից գննելով:— Չի՛ լինի՛ իմ կողմից էլ նվիրենք: Մեր երկուսի կողմից:

— Չէ՛,— ասաց Փուն,— այնքան էլ լավ միտք չէ: Նախ ես պետք է լվանամ այն, հետո կգրես վրան:

Արջուկը մաքուր լվաց կճուճն ու չորացրեց, իսկ Բուն լիզելով թրջեց իր մատիտի ծայրն ու սկսեց ստածել՝ ինչպես է գրվում *ծնունդ* բառը:

— Իսկ դու կարդալ գիտե՞ս, Փո՛ւ,— հարցրեց նա՝ մի փոքր անհանգիստ:— Տանս դռան վրա գրություն կա՝ դուռը թակելու և զանգը քաշելու մասին. Քրիստոֆեր Ռոբինն է գրել: Կարո՞ղ ես կարդալ:

— Քրիստոֆեր Ռոբինն ինձ ասաց՝ ինչ է գրված, ես էլ կարողացա կարդալ:

— Ուրեմն ես էլ քեզ կասեմ՝ ինչ են գրել այստեղ, և դու կկարողանաս կարդալ:

Եվ Բուն գրեց... Ահա թե ինչ էր գրել.



ՇՆԱՎՈՐ ԱՎՈՐ ՎՈՐ ԾՆՈՒՆԴԻԴ ՈՒՆԴԻ



Փուն հիացած Բվին էր նայում:

— Ես ընդամենը գրել եմ՝ *Ծանունդ շնորհավոր*, — իմիջիայ-  
լոց ասաց Բուն:

— Շատ սիրուն, երկար գրություն է, — տպավորված ասաց Փուն:

— Դե՛, իրականում գրել եմ՝ *Ծանունդ շնորհավոր*, սիրով՝  
*Փուից*:

Ասեմ, որ նման երկար գրությունների վրա ահագին մա-  
տիտ է ծախսվում:

— Հասկանում եմ, — ասաց Փուն:

Իսկ մինչ այդ Խոզուկը գնացել էր տուն, որ Իյորի համար  
փուչիկ վերցնի: Փուչիկն ամուր սեղմել էր իրեն, որ հանկարծ  
քամին չթոցնի: Ոտքերում ինչքան ուժ կար, վազում էր, որ  
Փուից առաջ հասնի Իշուկի մոտ, որովհետև ուզում էր առաջի-  
նը նվեր տալ նրան: Թող Իշուկը մտածեր, որ ինքն իրեն է գլխի  
ընկել՝ առանց ուրիշների ասելու: «Իշուկն ինչքան կուրախա-  
նա», — մտածում էր Խոզուկն ու առանց ոտքերի տակ նայելու  
վազում էր... Երբ հանկարծ ոտքն ընկավ ճագարի բույնն, ու  
բերանքսիվայր փռվեց:

Խոզուկը պառկել էր գետնին ու չէր հասկանում՝ ինչ կատար-  
վեց: Սկզբում նրան թվաց, թե ողջ աշխարհն է պայթել, ապա  
մտածեց՝ աշխարհի միայն այն մասն էր պայթել, որտեղ ան-  
տառն էր, իսկ հետո մտածեց, որ միայն ինքն էր պայթել և հիմա  
մեն-մենակ էր լուսնի վրա կամ մեկ ուրիշ տեղ և այլևս երբեք  
չէր տեսնելու ո՛չ Քրիսթոֆեր Ռոբինին, ո՛չ Փուին, ո՛չ Իյորին:



Հետո մտածեց. «Եթե անգամ լուսնի վրա եմ, կարիք չկա, որ բերանքսիվայր պատկեմ մնամ»: Եվ նա զգույշ ոտքի ելավ ու շուրջը նայեց: Դեռ անտառում էր:

— Զարնանալի բան,— մտածեց նա,— հետաքրքիր է, թե այդ ինչ պայթյուն էր: Իմ ընկնելուց դժվար այդքան աղմուկ բարձրանար: Փուչիկս ո՞ր է: Սա ինչ թաց քրջի կտոր է:

Փուչիկն էր:

— Ա՛խ, Տեր Աստված,— տրորվում էր Խոզուկը,— հիմա ինչ եմ անելու: Արդեն ուշ է: Հետ գնալ չեմ կարող, գուցե Իյորը փուչիկ այդքան շատ չի էլ սիրում:

Եվ նա գլխիկոր շարունակեց ճանապարհը, մինչև հասավ գետափի այն մասը, որտեղ Իյորն էր, ու ձայն տվեց նրան:

— Բարի լո՛յս, Իյո՛ր,— ասաց նա:

— Բարի լո՛յս, փոքրիկ Խոզուկ,— պատասխանեց Իյորը,— եթե իհարկե առավոտը բարի է: Անձամբ ես վստահ չեմ: Թեև ինչ նշանակություն ունի՝ ես ինչ եմ մտածում:

— Ծնունդդ շնորհավո՛ր,— ասաց Խոզուկը, որ արդեն մոտեցել էր:

Իյորը դադարեց գետի մեջ ինքն իրեն զննելուց, շրջվեց ու զարնացած նայեց Խոզուկին:


— Ապա կրկնի՛ր ասածդ:

— Ծնունդդ....

— Կա՛ց:

Երեք ոտքերի վրա կանգնելով՝ Իյորը զգուշությամբ վեր բարձրացրեց չորրորդ ոտքն ու մոտեցրեց ականջին:

— Երեկ արդեն արել եմ սա,— բացատրեց Իշուկը, երբ արդեն երրորդ անգամ էր վայր ընկնում:— Դժվար բան չկա: Այսպես եմ անում, որ լավ լսեմ: Ահա՛, ստացվեց: Ուրեմն ինչ էիք ասում:





Եվ Իյորը ականջը սնքակով առաջ հրեց:

— Ծնունդդ շնորհավոր,— նորից ասաց Խոզուկը:

— Ինձ հետ ես:

— Իհարկե, Իյոր:

— Իմ ծննդի սասի՞ն ես ասում:

— Հա՛:

— Ես իսկական ծննդյան օր ունեմ:

— Հա՛, Իյոր, ես էլ քեզ նվեր եմ բերել:

Իյորը աջ սնքակն աջ ականջից վայր բերեց, շրջվեց ու մի կերպ ձախ սնքակը բարձրացրեց:

— Հիմա մյուս ականջովս լսեմ, ասա՛ տեսնեմ:

— Նվեր եմ բերել,— շատ բարձր գոռաց Խոզուկը:

— Էլի ինձ հետ ես:

— Այո՛:

— Էլի իմ ծննդի սասի՞ն ես ասում:

— Իհարկե, Իյոր:

— Ես իսկական ծննդյան օր ունեմ:

— Հա՛, և ես քեզ փուչիկ եմ նվեր բերել:

— Փուչիկ,— ասաց Իյորը,— ասում ես փուչիկ: Այն մեծ գունավոր բաներից, որ փչում ես, մեծանում են: Ուրախություն, թթենու ծառ, պոպոկ-պնդոկ:

— Հա՛, էլի, բայց վախենան... Ցավում եմ, Իյոր... Բայց երբ վազելով գալիս էի սոտղ, վայր ընկա:

— Ա՛յ քեզ փորձանք, այ դժբախտություն: Երևի շատ արագ ես վազել: Հո տեղ չի վսասվել, փոքրիկ Խոզուկ:

— Չէ՛, բայց... Օ՛հ, Իյոր, փուչիկը պայթեցրել եմ:

Երկար լռություն տիրեց:

— Իմ փուչիկը,— վերջապես հարցրեց Իյորը:

Խոզուկը գլխով արեց:

— Իմ ծննդի փոչիկը:



— Հա՛, Իյո՛ր,— ֆսֆսաց Խոզուկը,— ահա՛, տե՛ս: Ծնունդդ շնորհավո՛ր:

Եվ Խոզուկն Իյորին հանձնեց թաց քրջի կտորը:

— Սա՛ էր իմ փուչիկը,— մի քիչ զարնացած հարցրեց Իյորը Խոզուկը գլխով արեց:

— Իմ նվերն էր:

Խոզուկը նորից գլխով արեց:

— Փո՛ւչիկը:

— Հա՛:

— Ծնորհակալ եմ, Խոզո՛ւկ,— ասաց Իյորը,— կներես, որ հարցնում եմ. ի՞նչ գույն ուներ այս փուչիկը, երբ... երբ դեռ փուչիկ էր:

— Կարմիր:

— Ուղղակի մտածում էի՝ տեսնես ինչ գույն ուներ... Կարմիր,— ինքն իրեն մրմնջաց Իյորը,— հենց իմ սիրած գույնը... Իսկ ի՞նչ չափի էր:

— Մոտավորապես իմ չափ էր:

— Ես էլ մտածում էի... Հենց Խոզուկի չափ,— սրտամաշ մի հառաչանք արձակեց Իյորը,— սիրածս չափը: Դե՛, ի՞նչ ասեմ:

Խոզուկը շատ տխրեց, չգիտեր՝ ինչ ասեր: Արդեն բերանը բացում էր, որ ինչ-որ բան ասի, և նույնիսկ մտածում էր, որ նման բան ասելուց օգուտ չկա, երբ գետի մյուս ափից ինչ-որ մեկը ձայն տվեց: Փուն էր:

— Ծնունդդ շնորհավո՛ր,— րդավում էր Փուն՝ մոռանալով, որ արդեն շնորհավորել էր Իյորին:

— Ծնորհակալ եմ, Փո՛ւ, — թախծոտ ասաց Իյորը,— ինձ արդեն շնորհավորել եմ:

— Ես քեզ նվեր եմ բերել,— ուրախ-ուրախ ասաց Փուն:

— Ես արդեն նվեր էլ եմ ստացել:

Փուն մինչ այդ հասցրել էր չփչփացնելով անցնել գետն ու մոտեցել էր Իյորին: Խոզուկը, մի քիչ հեռու նստած, գլուխն առել էր թաթերի մեջ ու քիթն էր վեր քաշում:





— Շատ օգտակար կճուճ է,—  
ասաց Փուն,— ահա՛. վրան էլ  
գրված է՝ *Ծանոնող շտորհավոր*: Մի-  
րով՝ Փուխց: Ամբողջ գրությունն  
այդ է նշանակում: Կարող ես  
իրերդ մեջը պահել: Ա՛ն:

Կճուճը տեսնելով՝ Իյորն  
իրար անցավ:

— Վա՛յ,— ասաց նա,— կարծում եմ՝ փուչիկս սրա մեջ հան-  
գիստ կտեղավորվի:

— Չէ՛, Իյոր,— ասաց Փուն,— փուչիկները շատ մեծ են և չեն  
կարող կճուճի մեջ տեղավորվել: Փուչիկը նրա համար է, որ  
ուղիղ բռնած պահես:

— Ո՛չ, իմ փուչիկը,— հպարտ ասաց Իյորը:— Ապա մի տես,  
Խոզո՛ւկ:

Եվ երբ Խոզուկը վշտահար հայացքով շրջվեց, Իյորն ատամ-  
ներով բռնեց պայթած փուչիկն ու զգուշորեն դրեց կճուճի մեջ,  
դուրս հանեց, դրեց գետնին, հետո նորից վերցրեց ու զգույշ  
դրեց կճուճի մեջ:

— Իսկապես, Խոզո՛ւկ,— ասաց Փուն,— քո փուչիկը տեղա-  
վորվում է կճուճի մեջ:

— Իրո՞ք որ,— ասաց Խոզուկը,— համ էլ դուրս է գալիս:

— Մի տեսնե՛ք,— ասաց Իյորը,— մտնում է և դուրս է գալիս, չէ՛:

— Ա՛յ լավ բան,— ուրախ ասաց Փուն,— լավ է՝ մտքովս ան-  
ցավ քեզ համար օգտակար կճուճ բերել, որ իրերդ մեջը դնես:

— Ինչ լավ է,— ուրախ ասաց Խոզուկը, որ իմ մտքով էլ ան-  
ցավ քեզ մի բան տալ, որ օգտակար կճուճի մեջ դնես:

Բայց Իյորը չէր լսում նրանց: Նա փուչիկը հանում էր  
կճուճից, հետո կրկին դնում կճուճի մեջ ու անսահման եր-  
ջանիկ էր...

— Իսկ ես նրան ոչ մի բան չտվեցի՞,— տխուր հարցրեց  
Քրիսթոֆեր Ռոբինը:

— Իհարկե տվեցիր,— ասացի ես,— մոռացել ես՝ դու նրան՝  
մի փոքրիկ... մի փոքրիկ...

— Ես նրան մի տուփ ներկ նվիրեցի, որ ինչ ուզենա, նկարի:

— Ճիշտ է,— ասացի:

— Իսկ ինչո՞ւ առավոտյան չնվիրեցի ներկերը:

— Առավոտյան դու գրադված էիր՝ Իյորի տարեդարձի սե-  
ղանք պատրաստելով: Իյորի ծննդին տորթ կար՝ վերևի շեր-  
տը՝ շաքարապատ, երեք մոմերով, վրան էլ վարդագույն շա-  
քարահյութով անունը գրված...

— Հա՛, նոր հիշեցի,— ասաց Քրիսթոֆեր Ռոբինը:

